

ԾԱԶԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՐԲԱԹԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԷՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Ա. Շրջան, Թ/Լ 23

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Զորս Աւեսարանիչները	ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ
Փխիկը (պատկերով ոսանաւոր)	ՅԱԿՈԲ ԵՖՐԱՐԱՅԻ
Փետուրներ մեծ մարդոց կեանքէն	ԾԱԴԿԱՍԷՐ
Աւան քոչնիկը (գեղոց)	ՄԿՐՏԻՉ ԹՈՓԱԼԵԱՆ
Աղուէտը եւ կասուն (անգլիներէն)	ԿԱՐԱՊԵՏ ԼՕԲՄԱՃԵԱՆ
Նրբանցիկն մէջ (պատմութիւն)	ՎՕԼԹԷՐ
Կիրակոս աղբոր ոչխարը	ՅՈՐ ՅՈՐԵԱՆ
Խաղողին ողկոյզը	ԱՐԱՄԱՆՈՅԵ
Մանիակի կեանք	ՎԻՐԺԻՆԻ ԴԱԶԱՆՃԵԱՆ

Հանելուկ, Հաւուական հարցում, ելն.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՑ ԵՒ ԴԱԿՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 30 դրուչ: Վեցամսեայ բաժնեգին չկայ:
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ ՀԱՄԱՐ Տարեկան 7 ֆրանք:

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ

Բաժնեգինները կարելի է դրկել Օսմ. մանտաբութով, փոխ" գրով,
եւ կամ դրոշմաթուղթով (20 հատը 20 դրուչի հաշուով):

Մանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող
ամէն կարգի գործառնութեանց համար դիմել մի՛ միայն՝

ՍԱԴԱՆԵԱՆԻ

{زاغيك غزته سي} درعليه ده غلطه ده قورشونلي خاندە نومرو ۷

«ԾԱԶԻԿ» ՀԱՆԴԷՍ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Դուրչունիու խան, Թիւ 7

REVUE "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N^o 7.

Գին 20 փարա

Ցպագրութիւն ՍԱԴԱՆԵԱՆ, Կալարա

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ նզգային, գրական և խղիւղական.
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ
համար 80 զրչ., ճամնայ 45 զրչ., գաւառներու համար 108 զրչ.
ճամնայ 60 զրչ. և օտար երկիրներու համար 35 ֆր. ճամնայ 20 ֆր.:
Զեռքէ վաճառում՝ ճաւր զխաւ: Խնամեալ բովանդակութիւն, ըն-
տիր յօդուածներ, թարմ լուրեր ու նորագոյն տեղեկութիւններ:
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշ-
խատակիցներով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ
մամուլին մէջ, օր աւուր աւելի՝ հրապուրիչ դառնալով՝ նորանոր
բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Նիւ-
թերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն իր մասնագիտական
յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանա-
ւորական, երկրագործական և այլն, բաց ի գրական ու բանասի-
րական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ: ԱՐԵՒԵԼՔի վե-
րաբերեալ ամէն գրութիւն և բաժանորդագին պէտք է ուղղել
Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի: Հասցէին, Ղալաթիա,
Մահմուտիէ շատաէսի ուր կը գտնուին թերթին տպարանն ու
խմբագրատունը:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀՕՍՏՕՏԵՍԱՆ 1805

Կ. Պոլիս, Մերձան Փողոց թիւ 57

Մարգարեան գրատան ցուցակը չը տեսած, դասադիրքերու
ընտրութիւն մի՛ ընէք, հարցուցէք զեղչը և պատասխան կառնէք:
Գրավաճառներու սպառած և խօսքին մի՛ հաւատաք:

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿԸ միայն մամուլ տակ է, միւս դասադիրքերը
ամէնքն ալ պատրաստ են:

Թղթատարի ծախքը մեր վրայ, ուզուած զիրքերն իրենց բոլը
գինով կը շրջուին ուղղովն:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

MATTONI

GISSHÜBLER

HEINRICH MATTONI, Carlsbad et Vienne

ԻՆՏԵՐՆԱԿՈՆԻՆԱԿԱՆ ԱՂԵՐԻՆԵ ԱՆՔԱՆԵԱՆ
ՍԵՂԱՅԻ ԼՈՒՍԿԱՅԻ ԵՐ ԶՈՒՍԱՅԻՆԵՆԵ

Հազի, կոկորդի ցուրտ, ստամոքի,
հարգութիւն և սիրտը բարձրացնող
կապուցիկ գին

ԿԻՂԱՆՈՒՄԻ ԱՄԷՆ ՏՈՂ

Մեծ հաղորդականութիւն, գինը
հասնելու, գինը գիններու գին և
հաղորդականութիւն մէջ:

ՇԱՀԻԿ

ՏԵՐԿԵՆ ՍՈՒՆԵԱՆ

(694) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 23

18 ՀԱՅՏԵՄԲԵՐ 1907

ՉՈՐԾ ԱՐԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԵՃ Բարեկամ քաղցրիկ Յիսուսը գրեթէ չորս տարի երկնային քարոզութիւններ և աննման հրաշքներ ըրաւ առաքեալներուն ու ժողովուրդին. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս ու Յովհաննէս պարտք, այո՛, նուիրական պարտք սեպեցին գրի առնել որչափ կրցան հիանալի այդ իօսուածները, հրաշալի այդ եղածները:

Անշուշտ գիտէք թէ Մատթէոս և Յովհաննէս Տէր Յիսուսի 12 առաքեալներէն են. իսկ Մարկոս ու Ղուկաս Անոր 72 աշակերտներէն:

Բայց ձեր պէտքուն աշուկներով կարգացած էք Ս. Աւետարանները, ձեր փափուկ մատներով թղթատած էք անոնց խնկելի էջերը: Պարծաքով կ'ըսեմ թէ իմ աշակերտներս կարդացած են ու կը կարդան:

Սիրեցէ՛ք Ս. Աւետարանները, որոնք երկնքի Արքայութեան մարդարիտը կուտան ձեզի, որոնք Աստուածային Մեծ Կեանքին անմահ պատմութիւնը կ'ընեն, որոնք Մաքուր կրօնքին ուրախութիւնները կը ներշնչեն, որոնք բարոյական վսեմ սկզբունքներու անթառամ փունջեր կը սփռեն, որոնք առաքինութիւններու անսպառ գանձեր՝ կը պարզեն, որոնք Մարդկութեան բարձրութիւնը կը շնչտեն, որոնք դաստիարակութեան հիմնակէտը, այսինքն մեծ ու կայտառեալ մարդ ըլլալ կը սովորեցնեն ձեզի, և մանաւանդ մաշտաղ հոգիներու դընտանի կ'ընեն Յիսուսի խորհելու կերպը, խօսելու ոճը, զօրաւոր պատճառարանութեան եղանակը:

Ուրեմն ո՛րքան երախտապարտ պէտք է ըլլանք Աւետարանիչներուն՝ իրենց տօնախմբութեան առթիւ. անոնց շնորհիւ ճանցանք Յիսուսը, Սուրբերուն Սուրբը, վարդապետներուն վարդապետը, իմաստուններուն իմաստունը, վերջապէս անճառելի Բանն Աստուածը:

Այս չաբաթ առաւօտ Հայ. Ս. Եկեղեցին իրաւամբ կ'երգէ «Երանելի՛ Ս. Առաքեալք» օրհնութեան շարականը:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ



Փ Ի Ս Ի Կ

Պզտիկ փխիկ, աղուոր փխիկ,
Ճերմակ տոսիկ, նախշուն փորիկ,
Աչուկներդ՝ ուլունքի պէս,
Տնկեր մեզի ի՞նչ կը դիտես:

Ժապաւէն ալ ունիս վիզիդ,
Գանգուր մուշտակ՝ ողորկ ուսիդ,
Օրիորդի պէս նուրբ ու փափուկ,
Ամառ ձմեռ կ'ըլլաս տաքուկ:

Սիրուն փսիկ, գիրկըս եկուր,
Տամ քեզ շաքար ու կերակուր,
Գնդակ մըն ալ պիտի տամ քեզ,
Որ մուկ բռնել լաւ մը փորձես:

Որովհետեւ փայլ, սէր, գգուանք,
Կը դառնան խիտ գէշ զբօսանք,
Եթէ անոնց չը միացնենք,
Քիչ մը օգուտ ու աշխատանք:

ՅԱԿՈԲ ԵՅՔԱՐԱՅԻ

ՓՇՈՒՐՆԵՐ ՄԵԾ ՄԱՐԴՈՑ ՄԱՆԿՈՒԹԵՆԵՆ

«ԴԱՇՏԱՄՈՒԿԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆԸ»

ԱՏԵՆՕՔ Անգլիոյ մէկ ագարակին մէջ, կ'ապրէր սեւ աչքերով, սեւ մազերով ու վտիտ կազմուածքով փոքրիկ տղայ մը՝ որուն անունն էր Տանիէլ Ուէպսթըր: Ագարակի գործերուն օգնելու չափ ոյժ չունէր, ուստի իր ժամանակին մեծ մասը կ'անցընէր անտառին մէջ խաղալով, և սորվելով ճանչնալ ու սիրել ծաղիկները, ծառերը, անտառները, և անոնց մէջ ապրող անյնաս կենդանիները:

Սակայն միշտ չէր խաղար: Դպրոց երթալու տարիքը ունենալէ շատ առաջ կարդալ սորվեցաւ, և այնքան լաւ կը կարդար որ ամէն մարդ գոհ կը մնար իրմէ և իրեն մտիկ ընելէ չէին ձանձրանար:

Դրացիները իր հօրը տունին առջեւէն ձիով անցած ատեննին կանգ կ'առնէին, ու կը կանչէին Տանիէլը որպէսզի կարդայ իրենց:

Այն ատենները փոքրիկ տղոց համար գիրքեր չկային, և այս փոքրիկ տղուն տունին մէջ քանի մը տեսակ գիրքեր միայն կային: Բայց Տանիէլ գտած գիրքերը կը կարդար, և զանոնք կըրէին և կրկին կը կարդար, մինչեւ որ անոնց բովանդակութիւնը իւրացնէր: Այս կերպով Ս. Դիրքէն շատ մը համարներ գոց սորվեցաւ, անսխալ, զորս բնաւ չի մոռցաւ:

Տանիէին հայրը ո՛չ միայն ազատակապան, այլ նաև քաղաքին դատաւորն էր, և օրէնքը շատ կը սիրէր, ու կը յուսար որ երբ Տանիէլ մեծնար փաստաբան մը կ'ըլլար:

Ահա օր մը պատահմամբ դաշտամուկ մը հաստատուեցաւ Տանիէլենց տունին մօտ գտնուող բլուրի մը կողին վրայ, ուրկէ մթին գիշերները վար կ'իջնէր ու կ'ուտէր պարտէզին մէջ աճող կաղամբներու և ուրիշ տունկերու փափուկ տերեւները:

Տանիէլ և իր եղբայրը Եղեկիէլ մտադրեցին բռնել փոքրիկ գոզը, որ երկար ատեն խորամանկ գտնուեցաւ: Վերջապէս ծուղակ մը շինեցին և հետեւեալ առաւօտ տեսան որ մէջն էր:

— Վերջապէս բռնեցինք, պոռաց Եղեկիէլ: Հիմա, պարո՛ն Դաշտամուկ, քեզ պիտի սպաննեմ, բաւական վնաս հասցուցիր մեզի: Բայց Տանիէլ խղճաց փոքրիկ անասունին վրայ:

— Ո՛չ, մի՛ վնասեր անոր, ըսաւ, հետու տեղ մը տանինք և հոն ազատ արձակենք:

Եղեկիէլ եղբորը չափ փափուկ սիրտ չունէր, և խնդաց այդ գաղափարին վրայ, որովհետեւ ինք սպաննելու կողմն էր:

— Այս մասին մեր հօրը կարծիքը հարցնենք, ըսաւ Տանիէլ:

Ուստի դաշտամուկը ծուղակով միասին իրենց հօրը տարին, և հարցուցին թէ ի՞նչ ընեն:

— Լա՛ւ, զաւակներս, ըսաւ հայրերնին, խնդիրը այս կերպով պիտի կարգադրենք: Ծիչդ հոս դատարան մը պիտի կազմենք. ես դատաւորը պիտի ըլլամ, և դուք փաստաբաններ, ու ձեզմէ իւրաքանչիւրը պիտի փաստաբանէ ի նպաստ և կամ ընդդէմ ամբաստանեալին:

Եղեկիէլ բացաւ դատը: Բանտարկեալին հասցուցած վնասներուն մասին խօսեցաւ ու ցուցուց թէ դաշտամուկերը գէշ ու անմատահելի կենդանիներ են: Ըսաւ թէ այս գոզը բռնելու համար շատ ժամանակ վատնուած էր, և եթէ ազատ արձակենք ա՛լ աւելի գէշ գոզ մը պիտի դառնայ, և բռնելն ալ դժուար:

Շարունակեց իր խօսքը ըսելով թէ դաշտամուկին մորթը քանի մը դահեկան կ'արժէր, բայց ասով իր հասցուցած վնասներուն կէսն ալ պիտի չի փոխարինուէր: Ու յարեց թէ քանի որ աս կենդանին գոզ մըն է, և ողջ մնալով օգուտ մը չունի, ուրեմն պէտք էր սպաննել դաշն:

Եղեկիէլին ճառը ա՛յնքան գեղեցիկ էր որ հայրը շատ գոհ մնաց: Ըսածներուն ա՛նքնն ալ ճշմարիտ և իրաւացի էին, և դատաւորը կը խորհէր թէ Տանիէլ ի՞նչ պատասխան պիտի գտնէ առնոց դէմ:

Բայց Տանիէլ դատաւորին երեսը նայեցաւ, ու սկսաւ պաշտպանել խեղճ կենդանին: Ըսաւ.

— «Աստուած ստեղծեց դաշտամուկը, և ստեղծեց որպէսզի ապրի արևուն ու մաքուր օդին մէջ, վայելելու դաշտերը և անտառները: Միւս արարածները ի՛նչ իրաւունք որ ունին ապրելու, դաշտամուկը նոյնը ունի, որովհետեւ կեանքը Աստուած տուաւ իրեն: »

«Աստուած կուտայ մեր ուտելիքը և մեր բոլոր ունեցածները. և չխնայե՞նք փոքրիկ համր արարածի մը որ նոյնքան իրաւունք ունի վայելելու Աստուծոյ տուած պարգեւներէն իրեն ինկած բաժինը որքան մենք մերինը: Այո՛ աւելին կայ, վասնզի մինչ յաճախ մարդիկը իրենց Աստուծուն օրէնքը կը կոտրեն, ան չընեն: »

«Ուրիշ կենդանիներու պէս վայրագ չէ ան: Բլուրին վրայ ծակի մը մէջ կ'ապրի խաղաղ, քիչ մը ուտելիքով, այս է իրեն պէտք եղածը: Քանի մը տունկերու միայն մնասած է ան, զորս կերած է ապրելու համար: Իրաւունք ունի ապրելու, անանելու, ուստի անիրաւ ենք մենք երբ կ'ըսենք թէ ուտելու չէ: »

«Տե՛ս իր աղերսարկու աչքերը: Նայէ՛ վախէն կը դողդղայ կոր, և այս է իր միակ միջոցը իր անուշիկ կեանքը փրկելու համար: Այնքան անգո՛ւթ ըլլալու ենք առնելու իրմէն այն կեանքը զոր Աստուած տուած է իրեն: »

Նոյն միջոցին դատաւորին աչքերը արցունքներով լեցուած էին: Հօրը սիրտը յուզուած էր, և զգաց որ Աստուած տուած է իրեն զաւակ մը որուն անունը օր մը ամբողջ աշխարհի ծանօթ պիտի ըլլար:

Չսպասեց որ Տանիէլ աւարտէ իր խօսքը, ոտքի ելաւ, ու աչքին արցունքները սրբելով պոռաց.

— Եղեմի՛ն՝ զաշտամուկը ազատ արձակէ:

Եւ աս տղան եղած է աշխարհի ամէնէն մեծ դիւանադէտնե-րէն ու ատենաբաններէն մին, Տանիէլ Ուէպսթրը:

ԱՅՈՒԹԵՐԷՆԷ ԲԱՐՁՄԱՆԵՂ՝ ԾԱՂԿԱՍԻՐ

ԱՐՁԻ ՄԸ ԽԵԼՔԸ

Կենդանիները իմացականութիւն ունին անուրանալի կերպով: Ասոր մէկ նոր ապացոյցն ալ դիտեցին վերջերս: Լիոնի (Ֆրանսա) կենդանաբանական պարտէզին մէջ, ճերմակ արջի մը մէկը հաց տուած ատեն, հացը վանդակին վարնուեցաւ և դնաց ինկաւ վանդակը շրջապատող ուղիսի (օլուք) մօր մէջ: Արջը վանդակին ծերպէն դուրս հանեց թաթը հացը առնելու համար սակայն ի վտր, որովհետեւ հեռուն էր: Վանդակին մէջ ջուրի աւազանիկ մը կար և այդ ուղիսը կը ծառայէր անոր մէջի ջուրը պարպելու: Արջը զընաց ան միջապէս աւազանին ծակը թաթովը բացաւ և եկաւ ասոյին սպասեց: Զուրը ուղիսին վերի ծայրէն առաւ հացի կտորը և սկսաւ քշել վար: Արջը երկնցաւ և երբ հացը իր առջեւէն կ'անցնէր առաւ ու ճաշակեց:

ԱՇՆԱՆ ԹՈՉՆԻԿԸ

(ԳԾՂՕՆ)

Ո՛վ ծիծեռնակ, սիրուն թռչուն
Խնչո՛ւ թռչտիս իմ չորսիդին,
Մի՛թէ տաքուկ բոյն չունի՞ս դուն,
Որ մնացիր այսպէս ցուրտին:
Դուն հէգ, լքեալ սիրուն թռչուն
Շուտ հեռացիր զնա՛ հեռուն:

Ընկերներդ չատոնց արդէն,
Թռան գացին տաք երկինքն,
Եւ չեն դիտեր թէ մէջերնէն
Հոս մնացած է մի ընկեր:
Դուն հէգ, լքեալ, սիրուն թռչուն,
Ե՛լ, հասիր քու ընկերներուն:

Թէ չես ուզեր, մնացի՛ր հոս,
Կ'ըլլամ քեզի ես հիւրընկալ,
Պիտի տամ հունտ, ջուր մշտահոս
Եւ բոյնի տեղ՝ տաք մահճակալ:
Դուն հէգ, լքեալ, սիրուն թռչուն,
Կեցի՛ր, մինչեւ անցնի աշուն:

Թէ փափաքիս, պիտի տամ քեզ
Խիստ գեղեցիկ վանդակ նախշուն,
Եւ ամէն օր առատապէս,
Հունտ, ջուր, շաքար, միրգեր սիրուն:
Դուն հէգ, լքեալ, սիրուն թռչուն,
Ընկեր ըլլանք, ե՛կ ես ու դուն:

ՄԿՐՑԻՁ ԹՕՓԱԼԵԱՆ

ԱՂՈՒՔԱՆ ԵՒ ԿԱՏՈՒՆ

(ԱՆԳԼԻՅԵՐԵՆԵ)

ՈՒ ԵՂԱՒ որ օրին մէկը կատուն անտառին մէջ աղուէսին հանդիպեցաւ : «Խորագէտ է անիկա, խորհեցաւ ան, փորձառու, և գիտէ աշխարհիս հնարքները. անո՛ր հետ ալ բարեկամ կրնամ ըլլալ» :

— Բարի լո՛յս, սիրելի պարոն Աղուէս. ըսա՛ ան, ի՞նչ պէս ես, այս ձանձրացուցիչ կեանքին մէջ ի՞նչ կերպով կ'առաջնաս կոր :

Աղուէսը գուռզարար, երկար ատեն առանց պատասխանելու, կատուն՝ ոտքէն մինչեւ գլուխը ուշի ուշով գննեց : Յետոյ վերջապէս ըսաւ. —

Ո՞վ դու կիսամօրուս-պիտաւոր թշուառական, ո՛վ դու խենդ կօտ (կրեայի պատեան), ո՛վ դու կէս մը սովամահ եղող մկնորս, ի՞նչ ըսել կ'ուզես իմ ինչպէս ըլլալս հարցնելով : Դուն ծանօթութիւն ունի՞ս կենցաղիդ մասին, քանի՞ յատկութիւններ ունիս, կրնամ հարցնել :

— Միայն մէկ յատկութիւն մը, պատասխանեց կատուն համեստաբար :

— Եւ ի՞նչ կրնայ ըլլալ ատիկա, հարցուց աղուէսը անարգական ձեւով մը :

— Երբոր շուները զիս հալածեն, ես կրնամ ծառի մը վրայ ապաստանիլ :

— Ամէնը ա՛տ է, հարցուց աղուէսը, ես հարիւրաւոր հմուտ թիւններու տէր եմ, և ատկէ զատ տոպրակ մը լեցուն հնորք ունիմ : Եթէ չես հաւատար, հետս եկո՛ւր և պիտի ցուցնեմ լ'է ի՞նչպէս շուներուն ձեռքէն կը պրծիմ :

Ճիշդ այդ վայրկեանին չորս շուներով որսորդ մը կուգար կոր : Կատուն զոգբերդալէն ծառէ մը վեր ցատկեց և ճիշդ գագաթին վրայ՝ տերեւներով չրջապատուած նստեցաւ :

— Տոպրակդ բա՛ց, Պարոն Աղուէս, տոպրակդ բա՛ց, և հընարքներդ դուրս հանէ, պոռաց կատուն. սակայն շուները արդէն ձերբակալած էին զայն և ամուր մը բռնած :

— Ա՛հ, պարոն Աղուէս, ձայնեց կատուն նորէն, հարիւրաւոր խորամանկութիւններովդ լքուած մնացիր : Եթէ ինծի պէս կարենայիր զոնէ հոս՝ վեր մագլցիլ, կեանքդ պիտի լանայուէր :

ԿԱՐԱՊԵՏ ԼՕԲՄԱՃԵԱՆ

ՆՐԲԱՆՑՔԻՆ ՄԷՁ

(ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Ն Ին ժամանակ մեծահարուստ ազնուական մը կար որ միշտ կը խաբուէր և կը կողոպտուէր: Շատ մը գանձապահներ առած էր, սակայն ամէնքն ալ գող և խաբեբայ ելած էին:

Օր մը, նոյն ժամանակները ապրող Զատիկ անուն իմաստունը քովը կանչելով պարզեց իր վիշտը անոր.

— Դուք, ըսաւ, գիտուն էք, իմաստուն էք, շատ մը գեղեցիկ բաներ գիտէք, չէ՞ք կրնար ինծի գտնել գանձապահ մը որ գող չըլլայ:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց Զատիկ, վստահելի գանձապահ մը գտնելու համար մէկ միջոց միայն կայ:

— Ո՞րն է այդ միջոցը, հարցուց մեծահարուստը:

— Այս պաշտօնը ընդունելու համար ներկայացող անձերուն հրամայել որ պարեն. և ո՛վ որ ամէնէն աւելի թեթեւութեամբ խաղայ, անիկա ընտրելու է անվրէպ:

— Կը ծաղրէ՞ք զիս, այս սեռակ զուարճալի կատակներով. ի՞նչ, կը կարծէք թէ այն անձը որ ամէնէն աւելի ոտքերը արագութեամբ շարժելով ցատկրտէ, ամէնէն արդար և ճարտար գանձապահը պիտի ըլլայ:

— Զեմ ըսեր թէ ամէնէն ճարտարը պիտի ըլլայ, պատասխանեց Զատիկ, բայց կ'ապահովցնեմ ձեզ թէ ամէնէն պատուաւոր մարդը պիտի ըլլայ. ասիկա անտարակուսելի է:

Իմաստունը այնքան վստահութեամբ և համարձակութեամբ կը խօսէր որ մեծահարուստը կարծեց թէ ան գերբնական գաղտնիք մը ունէր գանձապահները ճանչնալու:

— Անսովոր բաները չեմ սիրեր, Տէր, ըսաւ Զատիկ, հրամայեցէք որ փորձ մը ընեմ և այն ատեն շատ շուտ պիտի համոզուիք որ իմ գաղտնիքս շատ պարզ, շատ ալ զիւրիս է...

Մեծահարուստ ազնուականը ա՛լ աւելի դարմացաւ երբ լսեց թէ այս գաղտնիքը շատ պարզ էր:

— Օ՛ն ուրեմն, ըսաւ Զատիկի, ըրէ՛ ինչպէս որ կ'ուզես...

— Զգեցէք ինծի, ես կարգադրեմ ամէն բան և Դուք էք որ պիտի շահիք:

Ու նոյն օրը իսկ հրատարակել տուաւ մեծահարուստին անուսով թէ, ո՛վ որ կ'ուզէ անոր գանձապետը ըլլալ, ամուսն առա-

ջին օրը թող դիմէ ազնուականին ապարանքը թեթեւ հագուստներով :

Որոշեալ օրը վաթսուներչորս հոգի դիմեր էին :

Ընդարձակ սրահի մը մէջ նուագախումբ մը դրուեցաւ : Ներկայացողները պատրաստ էին պարելու , սակայն այդ սրահին դուռը դոցուած էր և հոնկէ ներս մտնելու համար պէտք էր բաւական մութ նրբանցքէ մը անցնիլ : Մասնաւոր ծառայ մը եկաւ և ներս մտցուց իւրաքանչիւր թեկնածու , իրարու ետեւէ , այն նրբանցքէն որուն մէջ շարուած էին այդ օրը մեծահարուստին բոլոր գանձերը և ուրկէ անցնելով սրահ մտնելու համար պէտք էր քանի մը վայրկեան հոն մնալ :

Երբ ամէնքն ալ սրահ հասան , տանուտէրը հրամայեց որ ըսկըսին պարել : Բոլոր թեկնածուներն ալ շատ դէշ և անշնորհ կերպով , առանց եռանդի կը պարէին , բայ ի մէկէն : Այս վերջինը միայն կատարեալ թեթեւութեամբ և պէտք եղածին պէս կը խաղար , գլուխը բարձր բռնած , ապահով նայուածքով , մարմինը շիտակ :

— Ահաւասիկ , Տէ՛ր , ըսաւ Զատիկ , այդ մարդը մատնանշելով , ահաւասիկ պատուաւորը , քաջը , հաւատարիմը որ արժանի է Զեր գանձապետը ըլլալու :

Մեծահարուստ տանուտէրը ոտք ելաւ , գրկեց այս հաւատարիմ անձը և յայտնեց թէ այդ օրուրնէ սկսեալ իր գանձապետը հոշակած է զայն : Գալով միւսներուն , ամէնքն ալ պատժուեցան ամէնաւանդ յանցանքով : Որովհետեւ , անոնք նրբանցքին մէջ գրտնուած միջոցնուն լեցուցած էին իրենց գրպանները ազնուականին գանձերովը և հազիւ հազ կրնային քալել :

Տանուտէրը շատ տրտմեցաւ որ վաթսուներչորս հոգիին մէջէն վաթսուներեքը խաբեբաներ էին :

Ո՛հ , այդ նրբանցքը որ վաթսուն երեք հոգիի դժբաղդութեան և մէկ հոգիի երջանկութեան պատճառ եղաւ :

Ահաւասիկ , սիրելի եղբայրներս պատմութիւն մը որմէ , շատ կրնաք օգտուիլ : Դող , խաբեբայ մարդիկը ո՛ւր որ ալ երթան յարգ ու պատիւէ կ'իյնան , անսիրելիներ կը դառնան . աշխատեցէք որ դուք անոնցմէ չըլլաք :

Թարգմանեց՝ ՍԵՊՈՒՀ Մ. ԱՎՈՒՆԻ

ՎՕԼԹԷՐ

ԿԻՐԱԿՈՍ ԱՂԲՕՐ ՈՋԻԱՐԸ

(ԺՈՂՈՎԱԲԱՅԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ՄՈՒՇԻ գիւղերէն մէկուն մէջ կը բնակէր Կիրակոս աղբար որ առեւտրացած էր նոյն գիւղին զեղջկունիներէն Շողակաթ առնունով աղջկան մը հետ: Կիրակոս աղբար իրաւ է թէ չատ խորա խոնկ չէր, բայց կնոջը բազմատաւար կարելի էր գոյն խորամանկ նկատել, քանի որ տիկին Շողակաթ վերջին ծայր միամիտ էր. տ'յնքան միամիտ որ... չեմ կրնար ըսել:

Արդ, առնումաճառի որ մը Տէր և Տիկին Կիրակոս Մուշ երթալով ոչխար մը գնած էին զոր գիւղ տարին: Երբ իրենց խեղճուկ նիւզակը հասան,

—Կնի'կ, ըսաւ Կիրակոս աղբար խօսքը Շողակաթին ուղղելով, հիմա ա'լ քեզ մնայ մեր ոչխար գիրցնել որ վերջէն երբ աղէկ մի գիրնայ, մորթենք, կտրտենք, ու խափուռման կոխենք(*):

Եւ իրաւ ալ Շողակաթ ամէն օր զայն դաշտերը թարմ խոտ ուտելու համար պտտցնելէ զատ, ամէն օր անոր առատ յարդ ու թրջած թեփ ալ կ'ուտար և ոչխարը օր աւուր կը գիրնար:

Եւ սեպտեմբերի վերջերը օր մը խեղճ կենդանին դանակի մը հարուածով իր վերջին շունչը աւանդելէ վերջ կտրտուեցաւ և աղանձածի մեծ կաթսային մէջ «խրիւռ, խրիւռ» եփուելէ վերջ մեծ կարասի (խւփ) մը մէջ տեղաւորուեցաւ:

Յետոյ Կիրակոս աղբար ըսաւ Շողակաթին.

—Կնի'կ, նայէ՛ խափուռմայի կտորներ, անանկ խնայես որ, անիկա բաւէ ամբողջ տարին, թէ՛ Յունուարին, թէ՛ Փետրուարին, թէ՛ Մարտին, թէ՛ Ապրիլին... և այլն... մինչեւ Դեկտեմբեր:

Եւ որովհետեւ Կիրակոս աղբար կը կասկածէր իր կնոջ յիշողութեան վրայ, հարցուց,

—Աղէկ մի հասկցա՞ր:

—Հա', հա', պատասխանեց միամիտ կինը, պէտք է որ բաւէ թէ՛ Յունուարին, թէ՛ Փետրուարին, թէ՛ Մարտին, թէ՛ Ապրիլին... և այլն... մինչեւ Դեկտեմբեր:

Եւ վստահ թէ իր կինը աղէկ մը հասկցած էր ա'լ, Կիրակոս աղբար անտառ կ'երթար փայտ կտրելու:

Մուրաքիկ մը որ Կիրակոս աղբար իր կնոջ տուած պատուէրը լսած էր, մտածեց որ կրնար Շողակաթին միամտութենէն օգուտ քաղել և զուռը զարկաւ:

Եւ Շողակաթ եկաւ դուռը բացաւ:

(*) Գաւառներու մէջ ողորտութիւն է ոչխար մը աղանձել (զախուշմա) և ձմեռուան պահել:

Մուրացկանը, այն ատեն խոնարհելով ըստ անոր.

— «Ողորմեցէ՛ք ողորմելի աղքատին:

«Երեք օր է բերանս հացչեմ դրած.

«Ողորմեցէ՛ք, Աստուած կուտայ տըւողին.

«Էրնէ՛կ անոնց որ աղքատին են գըլթած»:

— Անունդ ի՞նչ է, հարցուց Շողակաթ:

— Անունս Յունուար է, պատասխանեց մուրացիկը:

— Աղէ՛կ... անանկ է նէ կեցի՛ր, քեզի բերեմ մեր խավուռ մայէն կտոր մը, ինչու որ էրիկս ըստ որ պէտք է զայն պահեմ Յունուարին, Փետրուարին, Մարտին, Ապրիլին... Էն... մինչև Դեկտեմբեր:

Եւ անոր խոշոր կտոր մը տալով մուրացիկը գնաց:

Յաջորդ օրը մուրացիկը կեղծ մօրուք մը գնելով վերստին եկաւ ողորմութեան իր յանկերգը կրկնելու:

— Անունդ ի՞նչ է, ըսաւ Շողակաթ:

— Անունս Փետրուար է, պատասխանեց մուրացիկը:

— Աղէ՛կ, ահաւասիկ Փետրուարին բաժինը...

Եւ երբ Կիրակոս աղբար տեղեկացաւ թէ իր կինը բոլոր աղանձածը տուեր էր 12 ամիսներուն անունները կրող 12 աղքատներու, չափազանց բարկացաւ այսչափ տաղուչ կին մը ունենալուն համար և քիչ մը ազմուկ հանելէն վերջ,

— Ի՛նչ, ըսաւ, դուն ալ գնա՛ ցամաք հաց կեր որ հասկնաս:

Եւ ամբողջ տարի մը Շողակաթ ցամաք հաց կերաւ, բայց Կիրակոս աղբօր կերածն ալ անկէ-աւելի բան մը չէր:

Ահա՛ ապուշութեան արդիւնքը:

ՅՈՒ ՅՈՒԵԱՆ

ԽԱՂՈՂԻՆ ՈՂԿՈՅՁԸ

Մայր մը իր աղջկան ողկոյզ մը խաղող տուաւ: Դեռատի աղջիկը ողկոյզը առնելէն վերջ մտադրեց որ այդ ողկոյզը հաճելի պիտի ըլլար իր եղբօր և զայն անոր տարաւ:

Եղբայրը առաւ զայն և ըսաւ. «Հայրս որ վարը կ'աշխատի յոգնած պիտի ըլլայ. այս զովարար ողկոյզը անոր տանինք»:

Հայրը ողկոյզը առաւ, յետոյ տեսնելով որ իր կինը անկէ հեռու չէր, փութաց անոր քով, ողկոյզը անոր տալու համար:

Այսպէս խաղողին ողկոյզը վերադարձաւ այն ձեռքերուն մէջ՝ զոր նախապէս տուած էր: Եւ մայրը՝ չնորհակալ եղաւ Աստուծոյ՝ որ միութիւնը ընտանեաց բոլոր անդամներուն մէջ կը տիրէր:

Թարգմանեց՝ ԱՐԱՄԱՆՈՅԷ

ՄԱՆԻՇԱԿԻ ԿԵԱՆՔ

ԱՆՏԱՌԻՆ Եզրը զարգարող՝ մշուշի կաթիլներէն արցունքոտած մանիշակը առտուան զեփիւռէն կ'արթննայ ցրտասարսուռ։ Ծառերուն մերկ ճիւղերը՝ արշալոյսի արցունքով դեռ թաց և խոտերը ցօղի չիթերէն կէտկիտուած՝ չոգիէ ամպեր կ'արձակեն։ Օ՛հ, մանիշակը կը սարսուռայ ցուրտ փշուռներէն։

Այդ սառած մանիշակը հազիւ կը համարձակի վերաբացուիլ կարծես կը հծծէ։

«Արե՛ւ, սիւնէ ճառագայթներդ վրաս, ցոլացո՛ւր զիս»։

Եւ առոյգ արե՛ւը կը բարձրանայ, առատօրէն կ'ողողէ մանիշակը, անտառը և մարգագետինը իր համասփիւռ ճառագայթներով։ Անտառը կ'ողբւորուի մարգը իր կիտուածանկար ծաղիկներով կը փայտի և մանիշակը անյագաբար ոսկեգոյն անձրեւները կը լափէ։

Լոյսը կ'աճի, լոյսը կը բորբոքի, անտառները, ծաղիկները ոսկեղօծուած են բոլորովին, մանաւանդ այն հմայիչ ծաղիկները ծառերու ստուերին տակ պարտասած կը հակին։ Այն ինչ արեւը վերելած, ահա հօտը կը զարթնու մարգագետինին փարելով և անոր մէջ կորսուելով։ Եւ մանիշակն ալ յափրացած՝ ցօղունը կ'երկարէ, կը գունաթափի ճշմարիտ սիրահարի մը մահը ներկայացնելով։ Եւ բուրու մը կը վերանայ անմահ հոգիի մը նման։

ՎԻԺԻՆԻ Գ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Աճալեմսուհի Մայր վարժարանի

«ԳԱՆՁԱՐԱՆ ԲԱՐՈՑՈՒԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ»

Ծանօթ գրագէտ Արամ Անտոնեանի նոր հրատարակած այս գործը բնիկեցանու թեան լատիներէն տալիստոութիւնն է Միջին Դասընթացի համար իր դաստիարակութիւնովը։ Խնամած բովանդակութիւնովը և հաճելի նիւթերովը առաջնակարգ բնիկեցարան մըն է, զոր կը յանձնարարենք ամէն վարժարանի վարչութեան։

Մ Տ Ք Ի Ջ Բ Օ Ս Ա Ն Ք

Հանելուկ թիւ 23.

. . . . փայլուն մետաղ մը
. . . . ճաբոնցի զօրավար
. . . . ջրուղի մը
. . . . ըմպելի

Այս բառերը երբ դրուին կէտերուն տեղ, աջէն ձախ ինչ ձեւով որ կարգացուն, նոյնը պէտք է կարգացուն նաև վերէն վար:

Հաշուական հարցում թիւ 23.

Տունի մը բակին մէկ կողմը 4 կանգուն է և միւս կողմը 7,5: Բակը ծածկելու համար քանի՞ քառակուսի կանգուն աղիւս պէտք է:

Լուծողներէն երկուքը վիճակով պիտի ստանան մէյմէկ նոր հրատարակուած գիրք:

Պատասխանները պէտք է խմբագրատուն հասնին մինչեւ Հինգշաբթի առաւօտ ժամը երեք, և գրուած պէտք է ըլլան կողքին վրայի կտրօնին վրայ:

Թիւ 22 հանելուկին լուծումն էր.

ՎԱՆ-ԱԿ-ԱՆ

Թիւ 22 հաշուական հարցումին պատասխանն է.

Տղուն նախապէս խնայած դրամն էր 20 շրուշ:

Ծիշդ լուծողներն են. —

Պեշիկթաշի ազգ. վարժարանէն՝ Գառնիկ Պօռուճեան, Արայ Պօյաճեան, Եղուարդ Թուլումպաճեան, Եղուարդ Չփուրեան, Սարգիս Փափաղեան, Կոստանդ Չիթճեան:

Մայր վարժարանէն՝ Վերժին Պօղոսեան, Հայկ Պարտիզպանեան, Անժէլ Գաղանճեան, Նուարդ Աղաչրաքեան:

Խասգիւղէն՝ Պետրոս Մելիքեան, Գոհար Գարազաշեան, Էլմալթըզ:

Պերպիտեան վարժարանէն՝ Զարեհ Բերէսթէճեան:

Կեսիկ քաշայի վարժարանէն՝ Տրդատ Կարեան:

Եհնի Մահալլէն՝ Վահան Կիւմիւշճեան:

Բանկալքիի Ան. Յղ. Բերցէն՝ Հնազանդ Նարկիլէճեան:

Առաքազարի Հայունեացէն՝ Նուարդ Գայըքճեան:

Կեյվե.Միջագիւղի Ազգ. վարժարանէն՝ Երուանդ Պէյլէրեան:

Ատոնցմէ վիճակը շահեցան Խասգիւղէն Գոհար Գարազաշեան և Եհնի Մահալլէն Վահան Կիւմիւշճեան, որոնք կ'ստանան խոստացուած գիրքերը:

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ մեր Դործակալն է Տիար Յակոբ Դ. Սարգիս-
եան, որուն կրնան դիմել Վաղիկի բաժանորդ. գրուիլ փափա-
գողները և յանձնել թերթին բաժնեգիրն:

Իսկ փոխ-գործակալ կարգուած է Տեար Օննիկ Էպէեան, որ
արտօնուած է նաև դանձումներ կատարելու:

ՊԱՐՏԻԶԱԿԻ մեր գործակալութիւնը յանձն առած է տեղւոյն
Պոյս Հօմ վարժարանին ուսուցիչներէն Միսաք Էֆ. Թաթարեան,
որուն կրնան դիմել Մաղիկի բաժանորդագրուիլ փափագողները
և յանձնել թերթին բաժնեգիրն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ստացանք Ընթացի ԹՈՒԱՅԱՆՈՒԹԻՒՆ Տարր. Ա. Բ. տա-
րի. յօրինեց Զ. Թորոսեան, կը պարունակէ բուսկութիւն, յոս
գործող, հասարակ և քանոնողական կոստրակ, երկրաչափական
քիմիա և քաղաքականութիւններ, 54 չափական պատկեր-
ներ ու ձևեր: Ա.Ք. հաշիւ հիմնուած է օսման համար չափերու և
դասակարգում վրայ: Ուսուցումը լիովին բացառուած է գործին
սկիզբը, որով ամեն ծնողի ալ կրնայ դիւրութեամբ սորվեցնել իր
զաւակին: Վարժարանի Տնօրէններ գրաստուն դիմելով օրինակ մը
մէջ կ'առնեն. գաւառի գրավաճառներ և տնօրէնները 50 փարայի
քօսքի բոլոր զրկելու են իբր ծախք: Դիմեն է 41/2 և զեղչը 30 առ 10:
Հասցէ, Պահճէ Դարու, Բաքի փաշա խան:

ՄԱՆԶՈՒՄԷ

Պատկերազարդ Օրաթերթ առաւօտեան: Բա-
ղաքական, գրական, գիտական, աղագային
և տնտեսական: Տարեկան բաժնեգիրն է Պոլսոյ համար 80, գա-
ւառաց համար 108, իսկ վեցամսեայ Պոլսոյ համար 50 և գաւա-
ռաց համար 60 զրուշ: Զեռքէ՝ հատը 10 փարա: Մանգումէ առ-
նէն ժողովրդական օրաթերթն է Պոլսոյ, իր հաճելի և պէսպիսու-
թեամբ լեցուն բովանդակութեան համար: Բացի ամենօրեայ խը-
բագրական, և կեղեցական, գրական, տնտեսական և այլ յօդուած-
ներէ, քաղաքական, աղագային և ներքին ճոխ լուրերէ, չորեք-
շաբթի և չաբաթ օրերը կը հրատարակուի առեւտրական և գրա-
կան յաւելուածական էջերով:

ՈՐՆԷ

Տղաքներու և դպրոցականներու համար ամէնէն աղէկ գրա-
տունը:

— Զաւահարար Մեծ Նոր խանին քակ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԼԸԺ-
ՃԵԱՆԻ Կեդրոնական Նոր Դրատունը.

8 50

Լուծում քիւ 23 հանելուկին եւ հարցումին.